ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶԱՎԵՆ ԳԱԳԻԿԻ

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, մունիցիպալ, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2024

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

СМБАТЯН ЗАВЕН ГАГИКОВИЧ

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТИ АДМИНИСТРАТИВНОГО АКТА: АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02- Публичное право (конституционное, административное, муниципальное, европейское право, государственное управление)

ЕРЕВАН - 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի եվրոպական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Ա. Տխաբիսիմովա**
իրավաբանական գիտությունների թեկնածու **Ս.Ա. Իսկանդարյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ պետական կառավարման ակադեմիա**

Պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի հունիսի 20-ին՝ ժամը 16:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի մայիսի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Европейском университете Армении

Научный руководитель: доктор юридических наук, профессор **А.А. Хачатрян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Л.А. Тхабисимова**
кандидат юридических наук **С.А. Искандарян**

Ведущая организация: **Академия государственного управления РА**

Защита состоится 20-го июня 2024 года в 16:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке Государственного образовательного учреждения высшего профессионального образования «Российско-Армянский (Славянский) университет».

Автореферат разослан 17-го мая 2024 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук **Дж.А. Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը. Կառավարման ժամանակակից մարտահրավերները դարձել են ռեսուրսների լավարկման (օպտիմալացման) և ծառայությունների մատուցման բարելավման հրամայականը: Այս համատեքստում վարչական ակտերի արդյունավետության վերաբերյալ հետազոտությունը զգալի նշանակություն ունի և ենթադրում է ապացույցների վրա հիմնված որոշումներ կայացնելու հարթակ, բարձրացնում է կառավարչական մարմինների հաշվետվողականությունը, խթանում է կազմակերպչական աշխատանքը և նպաստում կայուն և արդյունավետ կառավարման համընդհանուր նպատակներին: Հայաստանի Հանրապետությունն այս առումով բացառություն չէ:

Վարչական ակտերի արդյունավետության գնահատման հետազոտությունը պատկերացումներ է տալիս հանրային իշխանության գործունեության բարելավման վերաբերյալ: Բացահայտելով լավագույն փորձը՝ քաղաքականությունը մշակողները կարող են նպատակաուղղված միջամտություններ իրականացնել՝ բարձրացնելու վարչական ակտի արդյունավետությունը: Նշված նպատակներով պայմանավորված ատենախոսությամբ առաջադրված նպատակներն ու խնդիրներն ունեն խիստ արդի և հրատապ կարևորություն:

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև այլ երկրներում գործող բազմաթիվ վարչական մարմիններն ամեն տարի ընդունում են միլիոնավոր վարչական ակտեր:

Հենց այդ հարթության վրա վարչական ակտերը հանդիսանում են ամբողջ աշխարհում կայացվող իրավական ակտերի ամենատարածված տեսակը:

Վարչական ակտերը հանդիսանում են հանրային բնույթի իրավահարաբերության շրջանակներում վարչական մարմինների կողմից արտահայտված էմպիրիկ կամքի դրսևորում, որը կազուալացնում է աբստրակտ բնույթի իրավահարաբերություններն ազդելով անձանց բնականոն կյանքի, գործունեության և իրավական կարգավիճակների վրա:

Վարչական ակտի ինստիտուտն իր էությամբ ուրույն տեղ ունի իրավական ակտերի համակարգում, պայմանավորված նաև այն հանգամանքով, որ վարչական ակտը հանդիսանում է այն ուղիղ գործիքը, որով պետահիրավական լծակներով օժտված մարմինները ազդեցություն են գործում անձի բնականոն կենսագործման վրա՝ իրավունքների (իրավական կարգավիճակի) և (կամ) պարտականությունների սահմանման, փոփոխման, դադարեցման կամ հաստատման եղանակով:

Սույն ատենախոսությունը հանդիսանում է վարչական ակտի դերի, նշանակության, նպատակների և ոլորտում առկա կանոնակարգումների համակարգային և տարածական հետազոտություն, որով առավել մանրամասն և ամբողջական հետազոտվում է վարչական ակտերի ընդհանուր ինստիտուտի, դրա ճյուղերի և հարակից ինստիտուտների կենսագործումը մեր կյանքում՝ ամփոփելով ինչպես ներպետական պրակտիկան, այնպես էլ միջազգային փորձը: Ուսումնասիրության արդյունքում վեր են հանվում այդ ոլորտներում առկա տեսական

և գործնական խնդիրները, միաժամանակ առաջ են քաշվում իրական լուծումներ առաջադրված խնդիրներին:

Սույն ատենախոսական հետազոտությունը կարելի է վերագրել նշված խնդիրների համակարգված ուսումնասիրությունների արդյունքում իրավունքի զարգացման հայեցակարգին, ինչն էլ պայմանավորում է դրա արդիականությունը:

Ատենախոսության ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները. Ատենախոսության ուսումնասիրության նպատակներն են՝

1. Վարչական ակտի իրավական էության, դասակարգման, գործառույթների, իրավաչափության, իրավական ուժի, իրավական արժեքի և իրավական կարգավիճակների կենսագործման մեխանիզմի գիտական ըմբռնման առավել ընդհանուր մոտեցումների ձևավորումը:
2. Վարչական ակտի իրավական էության, դասակարգման, գործառույթների, իրավաչափության, իրավական ուժի, իրավական արժեքի և իրավական կարգավիճակների կենսագործման մեխանիզմի առջև ծառացող տեսական և գործնական խնդրի վերհանումը:
3. Իրավական հետազոտության հիման վրա ոլորտը կանոնակարգող հասկացությունների ամրագրում, ինչպես նաև միջազգային և ներպետական տեսական և գործնական փորձի հիման վրա իրական հստակ կանոնակարգերի խարսխումը ՀՀ գործող օրենսդրական դաշտում:

Նշված նպատակներին հասնելու համար սույն գիտական հետազոտության շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել հանրային իրավունքի տեսության և վարչական իրավունքի ճյուղին առնչվող իրավական գրականությունը,
- իրականացնել ներկայումս տարբեր երկրներում գործող համակարգերի համապարփակ վերլուծություն,
- ուսումնասիրել քննարկվող դրույթների կիրառման պրակտիկան համապատասխան վարչական մարմինների և դատարանների կողմից,
- որոշել վարչական ակտի ընդհանուր հայեցակարգը, իրավական էությունը, հիմնական հատկանիշները, գործառույթները և արտահայտման պաշտոնական փաստաթղթային ձևերը,
- բացահայտել վերոգրյալ հայեցակարգերի նորմատիվային կարգավորման բացերն ու հակասությունները, այդ բացերն ու հակասությունները վերացնելու կոնկրետ առաջարկներ ձևակերպել,
- ձևակերպել հատուկ առաջարկներ ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում իրավունքի և իրավական համակարգի զարգացման ուղղությամբ:

Հետազոտության օբյեկտը և առարկան. Ուսումնասիրության օբյեկտը վարչաիրավական հարաբերություններն են, որոնք ծագում են տարբեր երկրների վարչական մարմինների, առանձին իրավական ակտերով նրանց անունից գործող մարմինների կողմից իրենց պետաիրավական գործունեության ընթացքում կայացվող վարչական ակտերի կենսագործումից:

Ատենախոսական հետազոտության շրջանակներում ուսումնասիրության առարկա են հանդիսանում հետազոտության օբյեկտին առնչվող տարբեր երկրների իրավական ակտերը, իրավական դոկտրինան և դրանց կիրառման դատական պրակտիկան:

Հետազոտության տեսական և նորմատիվ հիմքերը. Այս ատենախոսական հետազոտության տեսական հիմքը գիտական աշխատություններն են, տեսության և իրավունքի դասագրքերը, որոնց հեղինակների շարքի են դասվում, Ն.Ա. Այվազյան, Գ. Դանիելյան,Վ. Պողոսյան, Օ. Լյուխթերհալդը, Ռ.Ռ.Վ. Ռայմեռսը, Օ. Մայերը, Տ. Հերենը, Կ. Ֆ. Օուդեկրաալը, Ֆ. Ի. Պեինը, Ս. Հ. Հերվինգը, Դ. Մ. Չեչոտը, Պ. Ե. Նեդբայլոյը, Ն. Ն. Վոպլենկոյը, Ն. Ի. Տկաչևը, Ա. Պ. Կորենևը, Յու. Պ. Սալավյովը, Ն. Գ. Սալիշչևանը, Վ. Սիրինկոյը, Գ. Օ. Բելանովայը, Լ. Ա. Նիկոլաևը, Ա. Կ. Սոլովյովը, Ա. Թ. Բոնները, Դ. Մ. Պրետորիուսնը և այլ հեղինակավոր իրավագետներ:

Սույն ատենախոսության նորմատիվային հիմքն են հանդիսացել մի շարք երկրների օրենսդրական դաշտերում տեղ գտած օրենքները, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը, որոնցով վարչական մարմիններն առաջնորդվում են վարչական ակտեր կայացնելիս:

Սույն ուսումնասիրության մեթոդական հիմքը ձևավորվում է ֆորմալ տրամաբանական և ֆորմալ իրավական մեթոդներով, համակարգային կառուցվածքային, տեխնիկական և իրավական վերլուծության մեթոդներով, որոնք օգտագործվել են ուսումնասիրության, համակարգման, հասկացությունների և իրավական բովանդակությունների բացահայտման ընթացքում:

Ատենախոսության գիտական նորույթը. Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ ատենախոսն առաջին անգամ վարչական իրավունքի գիտության զարգացման գործընթացում խորապես հետազոտություն է կատարել տարբեր երկրների վարչական իրավունքի՝ սույն ատենախոսության բովանդակությունը ներառող ինստիտուտների վերաբերյալ, ամփոփել է տվյալ ինստիտուտների վարչական և դատական կիրառման և մեկնաբանման միջազգային և ներպետական պրակտիկան, որի հիման վրա առաջարկվել են համապատասխան հայեցակարգեր թե՛ հասկացությունների ու ձևակերպումների, և թե՛ օրենսդրական ամրագրումների մակարդակով:

Առաջ են քաշվել իրավական խնդիրներ և առաջարկվել կառուցողական, երբեմն նաև ոչ ստանդարտ լուծումներ առաջադրվող խնդիրներին:

Բացի այդ, աշխատանքը տալիս է առաջարկություններ վարչական մարմինների գործունեության որոշակի ոլորտներում առկա իրավական բացերի, հակասությունների վերացման վերաբերյալ:

Ատենախոսական հետազոտության առավել նշանակալից արդյունքները, որոնք ի թիվս այլ բաների, բնութագրում են նրա գիտական նորույթը, հետևյալն են՝

- վարչական ակտի տարրերի բացահայտումը և դրա հիման վրա վարչական ակտի նոր հասկացության սահմանումը
- վարչական ակտի գործառույթի հասկացության և տեսակների սահմանում,

- վարչական ակտի իրավաչափության բաղկացուցիչների բացահայտումը և դրա հիման վրա վարչական ակտի իրավաչափության հասկացության սահմանում,
- վարչական ակտի գործողության կասեցման ինստիտուտի շուրջ առավել կանոնակարգող մեխանիզմների սահմանում,
- վարչական բողոքի քննության փուլում անկախ բողոքի բովանդակությունից, վարչական մարմնի գործն ի պաշտոնե ամբողջ ծավալով քննելու մեխանիզմների սահմանում,
- վարչական ակտի անբողոքարկելիության հասկացության սահմանում և այն ՀՀ օրենսդրական կարգավորումներով չսահմանափակելու մեխանիզմների ներդրումը,
- անբողոքարկելիության ինստիտուտը կանոնակարգող իրավական կարգավորումներում բացերի լրամշակում և ամբողջացնող մեխանիզմների սահմանում,
- վերադաս վարչական մարմին չունեցող վարչական մարմինների ինստիտուտը կանոնակարգող մեխանիզմների սահմանում,
- վարչական ակտի օրենքի ուժով իրավաբանական ուժի կորստի սպառիչ հիմքերի շարադրում և այդ հիմքերը կանոնակարգող մեխանիզմների սահմանում,
- վարչական ակտի առ ոչինչության ինստիտուտը կանոնակարգող մեխանիզմների սահմանում և առ ոչինչության հիմքերի լրամշակում,
- իրավաչափ վարչական ակտով պատճառված վնասի ինստիտուտի պարզաբանում և ոլորտը կանոնակարգող մեխանիզմների սահմանում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները. Ելնելով առաջադրված նպատակներից և դրանցից բխող խնդիրներից՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները:

1. Վեր հանելով վարչական ակտի հասկացության ու իրավական բովանդակության բնորոշման կարգավորումների միջազգային փորձը, ինչպես նաև հաշվի առնելով ներպետական նախադեպային իրավունքում նախադեպային որոշումների ձևով արտահայտած դիրքորոշումները վարչական ակտի հասկացության և ընկալման վերաբերյալ՝ ատենախոսությամբ հիմնավորվել է վարչական ակտի հետևյալ հեղինակային սահմանումը, ըստ որի՝ վարչահրավական ակտը սահմանված ձևին համապատասխան ընդունված, արտաքին դրսևորմամբ, կարգավորող ազդեցությամբ, անհատական իրավական ակտ է, որն ընդունվում է վարչական մարմնի կամ վարչական մարմնի անունից վարչական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված սուբյեկտի կողմից՝ վերջինիս լիազորությունների իրականացման ընթացքում, կոնկրետ անձի (անձանց խմբի) համար իրավունքների, իրավական կարգավիճակի կամ պարտականությունների սահմանման, փոփոխման, հաստատման, կամ դադարեցման նպատակով, ինչպես նաև կարող է ուղղված լինել այդպիսի իրավական հետևանքներ առաջացնելուն:

2. Գնահատելով վարչական ակտի ազդեցությունը հանրային իրավահարաբերությունների վրա և կարևորելով վերջինիս գործառույթային նշանակությունը, վարչական ակտի գործառույթի և դրա տեսակների միասնական

տեսահիրավական սահմանումը՝ ատենախոսությամբ հիմնավորված է հեղինակային հետևյալ դիրքորոշումը, ըստ որի՝ վարչական ակտի գործառույթն ընկալվում է որպես այդ ակտի ազդեցություն հանրային իրավական հարաբերությունների վրա, որն ապահովում է ընդունված վարչական ակտի նպատակների անարգել իրագործումը և վարչական վարույթի խնդիրների լուծումը հենց վարչական ակտ ընդունելով: Միաժամանակ, ատենախոսությամբ հիմնավորվել է, որ վարչական ակտն ունի հետևյալ գործառույթային նշանակությունները՝ ա) նյութահիրավական, որը նշանակում է, որ ընդհանուր աբստրակտ իրավիճակը կազուալացվում է, սահմանվում են կողմերի համար իրավունքներ և պարտականություններ, (նյութական իրավունքից կախված, դեկլարատիվ գործողությամբ, բ) ընթացակարգային, որը նշանակում է, որ վարչական ակտը վարչական վարույթի դադարեցման միջոց է: Վարչական ակտը՝ որպես իրավական ակտ, հանգեցում է վարչական վարույթի ավարտին, գ) հանրային շահի ապահովման, որը նշանակում է, որ վարչական ակտերը հանդես են գալիս որպես կառավարման հիմնական ձև, որոնց նպատակն է ապահովել ամբողջ հասարակության, նրա սոցիալական խմբերի, պետության և քաղաքացիների շահերը, կոնկրետ, կազուալ հարաբերություններում: Վարչական ակտեր ընդունելիս՝ վարչական մարմինն առաջին հերթին առաջնորդվում է քաղաքացիների, հասարակության և ամբողջ պետության շահերով, դ) վարչական ակտի գործադիր գործառույթ, որը նշանակում է, որ պետությունն ապահովում է պետական կառավարման գործնական իրականացումը վարչարարության իրականացման և դրանց կատարման կարգի օրինական սահմանման միջոցով, ե) իրավական հետևանք առաջացնող, որը նշանակում է, որ անկախ վարչական ակտի տեսակից՝ այն դրա հասցեատիրոջ կամ այլ անձանց համար առաջ է բերում հետևանքներ:

3. Բացահայտելով վարչական ակտի իրավաչափության գնահատման վերաբերյալ իրավական կարգավորումների ներպետական և միջազգային փորձը, գնահատելով դրա տարրերը, ինչպես նաև հաշվի առնելով վարչական ակտի իրավաչափության միասնական հասկացության և իրավաչափության կանխավարկածի սկզբունքի սահմանման անհրաժեշտությունը՝ ատենախոսությամբ հիմնավորվել է վարչական ակտի իրավաչափության հեղինակային սահմանումը, ըստ որի՝ վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն ընդունվել է նման իրավասությամբ օժտված սուբյեկտի կողմից՝ առանց հայեցողական լիազորության սահմանազանցման կամ չարաշահման, գործող օրենսդրությամբ սահմանված ծավալի շրջանակներում, անձանց իրավունքների և ազատությունների կաշկանդվածությամբ, իրավունքի գերակայության երաշխավորմամբ:

Միաժամանակ, ատենախոսությամբ հիմնավորվել է, որ վարչական ակտի իրավաչափությունը կարող է գնահատվել երկու հարթության մեջ. ա) նյութական, որը նշանակում է, որ վարչական ակտն ընդունվել է նյութական իրավունքի նորմերի երաշխավորմամբ և հաշվառմամբ: Նյութական իրավաչափությունն ինքնին ուղղակի կապի մեջ է անձի այս կամ այն հիմնարար իրավունքի հետ, ունի էական

նշանակություն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում, որպիսի նախապայմանին չհամապատասխանելու դեպքում վարչական ակտը չի կարող որակվել որպես իրավաչափ: բ) ձևական (ընթացակարգային), որը նշանակում է, որ ակտն ընդունվել է օրենսդրությանը համապատասխանող ընթացակարգերով: Ընթացակարգային պահանջները և դրանց խախտման իրավական հետևանքները հարաբերական բնույթ են կրում: Այսինքն՝ նյութական իրավունքի համեմատությամբ ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթն արտահայտվում է նրանում, որ ընթացակարգային սխալները որոշիչ չեն, եթե չեն ազդում կայացվելիք վարչական ակտի նյութական իրավաչափության վրա և չեն խախտում գործի ելքով շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները:

Ատենախոսությամբ հիմնավորված է նաև այն դիրքորոշումը, ըստ որի՝ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածն անհրաժեշտ է դիտարկել որպես վարչական ակտի արդյունավետության և գործողության երաշխիք, ըստ որի՝ վարչական ակտն իրավաչափ է, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ճանաչվել ոչ իրավաչափ կամ անվավեր:

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական իրավունքին մինչ այժմ հայտնի են վարչական մարմիններ, որոնք չունեն վերադաս վարչական մարմին, չնայած նրա, որ նույն իրավունքի ճյուղում առկա է վարչական ակտերը վերադասության կարգով բողոքարկելու ինստիտուտ, ինչը հակասում է իրավական տրամաբանության և իրավական որոշակիությանը՝ ատենախոսությամբ հիմնավորված է այն դիրքորոշումը, ըստ որի՝ յուրաքանչյուր դեպքում, երբ վարչական մարմին հասկացության ներքո ներառվող սուբյեկտը չունի վերադաս վարչական մարմին, ապա վերադասության կարգով վարչական բողոք պետք է քննվի այդ մարմնի կողմից ստեղծված կամ լիազորված հատուկ սուբյեկտի կամ հանձնաժողովի կողմից, որի ստեղծումը որևէ կերպ չի կարող հակասել վերջիններիս անկախության երաշխիքներին, եթե այդպիսիք առկա են:

5. Ընդհանրացնելով վարչական իրավունքում առկա իրավաչափ վարչական ակտով պատճառված վնասի ինստիտուտի շուրջ ձևավորված փորձը, գնահատելով դրա ազդեցությունն ու կարևորությունն օբյեկտիվ իրականության մեջ, ինչպես նաև առաջնորդվելով այս ինստիտուտի նախապայմանների և հիմքերի սահմանման արդիականությամբ, դրանով իսկ երաշխավորելով ինստիտուտի բնական կենսագործումը՝ ատենախոսությամբ հիմնավորված է այն դիրքորոշումը, ըստ որի՝ վարչական մարմնի կողմից փոխհատուցման ենթակա են իրավաչափ վարչական ակտով պատճառված վնասի փոխհատուցման այն պահանջները, որոնցով իրավաչափ վարչական ակտի և վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ: Միաժամանակ, ատենախոսությամբ հիմնավորվել է, որ փոխհատուցման ենթակա չեն իրավաչափ վարչական ակտով պատճառված վնասի փոխհատուցման այն պահանջները, որոնք՝ ա) անձը չի հիմնավորում իր կողմից վկայակոչված վնասի առկայությունը, բ) կարող են ներկայացվել նաև այլ անձանց, գ) անձը չի հիմնավորում իրավաչափ վարչական ակտի հետ վնասի պատճառահետևանքային

կապը: Միաժամանակ, ատենախոսությամբ հիմնավորվել է նաև, որ իրավաչափ վարչական ակտով պատճառված վնասի փոխհատուցում պահանջելու մասին դիմումը կարող է բավարարվել մասնակի, այն դեպքում, երբ վարչական մարմինը փոխհատուցում տրամադրելու դիմումի քննարկման արդյունքում հաստատված է համարում իրավաչափ վարչական ակտի և անձին պատճառված վնասի առկայության փաստը, սակայն սահմանում է վնասի փոխհատուցման առավել նվազ չափ, քան հայցվում է՝ պայմանավորված վնասի չափերի ծավալի իրական հաշվարկի կամ դրա վարչական ակտի առնչության հետ:

6. Վեր հանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ առկա իրավական հակասությունները, իրավական բացերը, իրավական անճշտությունները, ամփոփելով դրանց կիրառելիության վարչական և դատական պրակտիկան, ուսումնասիրելով ոլորտի միջազգային փորձը և ընդգծելով օրենսդրական կանոնակարգումների զարգացման արդիականությունը թե՛ պաշտպանության ներկայացվող դրույթների համատեքստում, թե՛ կատարված եզրահանգումների համատեքստում՝ ատենախոսությամբ հիմնավորված և հավելվածի ձևով կից ներկայացվում է ինստիտուտը կանոնակարգող հիմնական իրավական ակտում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի արդյունավետությունը բարձրացնող փոփոխություններ և լրացումների կատարելու վերաբերյալ օրենսդրական նախագիծ:

Ատենախոսության գիտատեսական ու գործնական նշանակությունը. Ատենախոսության մեջ պարունակվող տեսական եզրակացություններն վարչական ակտի սահմանման, բնութագրերի, դասակարգման, ընդունման իրավական նշանակության, գործառույթների, իրավաչափության մասին կարող են օգտագործվել բարձրացված հիմնախնդիրների հետագա գիտական հետազոտությունների ընթացքում:

Վարչական իրավունքի գիտության համար հիմնարար նշանակություն ունեն ատենախոսությամբ մատնանշված վարչական ակտի բողոքարկման, դրա բողոքարկման արդյունքում առաջ եկող հիմնախնդիրների, վարչական ակտի իրավաբանական ուժի կորստի, վարչական ակտի գործողությունից բխող հետևանքների ինստիտուտների վերլուծությունից բխող առաջարկները՝ որպես իրավունքի զարգացման միջոց:

Ատենախոսության մեջ ձևակերպված տեսական դրույթները, եզրակացությունները և առաջարկությունները կարող են օգտագործվել գործող իրավահամակարգում վարչական մարմինների կողմից վարչական ակտերի ընդունման, դրանց հետագա գործողության, անձանց իրավունքների ապահովման, իրավունքի գերակայության երաշխավորման գործընթացում, ինչպես նաև կարող են օժանդակել համապատասխան ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի ընդունման օրենսդրական նախագծերի և դրանց տեղեկանք-հիմնավորումներ մշակելու գործին:

Բացի այդ, ատենախոսության մեջ շարադրված տեսական դրույթները կարող են օգտագործվել «Վարչական իրավունք» դասընթացի բարձրագույն ուսումնական

հաստատություններում ուսումնական գործընթացում, գործադիր իշխանության հանրային ծառայողների վերապատրաստման և խորացված ուսուցման ընթացքում, ինչպես նաև դասագրքերի և ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը. Ատենախոսությունը պատրաստվել է Հայաստանի եվրոպական համալսարանում, որտեղ ներկայացվել են գիտական հոդվածներ, կազմակերպվել են քննարկումներ թեմայի վերաբերյալ:

Ատենախոսության հիմնական դրույթների վերաբերյալ գործնական կիրառելիության համատեքստում քննարկումներ են կազմակերպվել նաև տարբեր վարչական մարմինների ներկայացուցիչների հետ:

Ատենախոսության բովանդակությունը կազմող ինստիտուտների վերաբերյալ դիտարկումներ հեղինակի կողմից ներկայացվել են նաև ՀՀ վճռաբեկ դատարանին ներկայացված վճռաբեկ բողոքներում, որոնցից մի քանիսի հիման վրա կայացվել են նախադեպային որոշումներ:

Ատենախոսության արդյունքներն ամփոփվում են նաև ատենախոսությանը կից ներկայացվող հավելվածում՝ օրենքների նախագծի տեսքով:

Ատենախոսության կառուցվածքը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք միավորում են ինը պարագրաֆներ, եզրակացությունից, հավելվածից և ատենախոսության պատրաստման ժամանակ օգտագործված աղբյուրների մատենագիտական ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված են հետազոտության թեմայի արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակները, նպատակներին հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմունքները, գիտական նորույթը, պաշտպանության են ներկայացվում գիտական նորույթներ, ատենախոսության գիտագործնական նշանակությունը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Վարչական ակտի սահմանման իրավական բնույթը» վերտառությամբ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

«Վարչական ակտի ինստիտուտի ձևավորման պատմական ակունքները. պատմահիրավական վերլուծություն» վերտառությամբ առաջին ենթագլխում քննարկվում են վարչական ակտի հասկացության ձևավորման պատմական հիմքերը:

«Վարչական ակտը որպես վարչական մարմնի գործունեության ձև վարչական ակտի հասկացության սահմանման տեսական-իրավական հիմնահարցերը» վերտառությամբ երկրորդ ենթագլխում քննարկվում են կայացվող վարչական ակտի որպես վարչական մարմնի էմպիրիկ կամքի արտահայտման իրավական ձևի վերաբերյալ դատողություններ, ինչպես նաև քննարկվում է ՀՀ գործող օրենսդրական դաշտում տեղ գտած վարչական ակտի հասկացության սահմանման տարրերը, վեր են հանվում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված նախադեպային որոշումներով արտահայտված տեսական դատողությունները:

«Վարչական ակտը որպես իրավական ակտ. հատկանիշները, գործառույթները, նպատակները և ընդունման անհրաժեշտությունը» վերտառությամբ երրորդ ենթագլխում քննարկվում են վարչական ակտի դերն իրավական ակտերի համակարգում, նշանակությունը, հատկանիշները, նպատակները, որոնց ուղղված է այն: Բացահայտվում է վարչական ակտի գործառույթի էությունը, դրա հասկացությունը, թվարկվում են դրա տեսակները: Հիշյալ ենթագլխում քննարկվում է նաև վարչական ակտի ընդունման իրավական անհրաժեշտությունը:

«Վարչական ակտի սահմանման հիմնախնդիրները միջազգային իրավական կարգավորումների համատեքստում» վերտառությամբ չորրորդ ենթագլխում քննարկվում են վարչական ակտի հասկացության սահմանման վերաբերյալ տարբեր երկրներում տեղ գտած կարգավորումները, այդ կարգավորումները համեմատվում են երկրորդ ենթագլխում տեղ գտած դատողությունների հետ: Քննարկվում են Եվրոպայի խորդհրդի նախարարների կողմից առաջարկությունները վարչական ակտի հասկացության սահմանման վերաբերյալ, և հեղինակի կողմից սահմանվում են վարչական ակտի հասկացության տարրերը սեփական ընկալմամբ, որոնց մի մասն առկա չէ ներկայումս սահմանվող հասկացության մեջ, ինչի հիման վրա հեղինակի կողմից տրվում է վարչական ակտի հեղինակային սահմանում:

Ատենախոսության երկրորդ՝ «Վարչական ակտի արդյունավետության գնահատման հիմնախնդիրները» վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«Վարչական ակտի արդյունավետության գնահատման տարրերը» վերտառությամբ առաջին ենթագլխում քննարկվում են արդյունավետության գնահատման տարրերը՝ թվարկելով դրանք, ինչպես նաև վկայակոչվում են դրանցից առավել կարևորները:

«Վարչական ակտի իրավաչափության գնահատումը և դրա օրինականությանը ներկայացվող պահանջների առանձնահատկությունները» վերտառությամբ երկրորդ ենթագլխում քննարկվում է վարչական ակտի իրավաչափության գնահատման հայեցակարգը, բացահայտվում է դրա դերն ու նշանակությունը, վեր են հանվում իրավաչափության տարրերը, ինչի հիման վրա տրվում է վարչական ակտի իրավաչափության հեղինակային սահմանում: Ենթագլխում քննարկվում են նաև վարչական ակտի բողոքարկման և անբողոքարկելիության ինստիտուտները, որպես իրավաչափության գնահատման գործիք:

«Վարչական ակտի գործողության ազդեցության և հետևանքների գնահատումը» վերտառությամբ երրորդ ենթագլխում քննարկվում են վարչական ակտի ուժի մեջ մտնելու, իրավական հետևանք առաջացնելու, ինչպես նաև իրավական հետևանքներից բխող ինստիտուտները, վարչական ակտի անվավերությունն ու առ ոչինչությունը, և վարչական ակտի իրավաբանական ուժի կորուստը՝ որպես ազդեցության դադարի միջոց:

Ատենախոսության երրորդ՝ «Վարչական ակտը ներպետական իրավական համակարգում. օրենսդրական բացերի հիմնախնդիրները» վերտառությամբ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

«Վարչական ակտը Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումների համակարգում. Օրենսդրական բացերի հաղթահարման հիմնահարցերն իրավակիրառ պրակտիկայում» վերտառությամբ առաջին ենթագլխում քննարկվում են վարչական ակտի ինստիտուտը կանոնակարգող իրավական համակարգում առկա բացերը, իրավական հակասությունները, առաջարկվում են դրանց հաղթահարման լուծումներ:

«Վարչական ակտի օրինականության ապահովումը սահմանադրաիրավական և վարչաիրավական կարգավորումների համատեքստում» վերտառությամբ երկրորդ ենթագլխում քննարկվում են վարչական ակտի օրինականության ընկալման սահմանադրական և վարչաիրավական մոտեցումները, քննարկվում է պատշաճ վարչարարությունը որպես վարչական ակտի օրինականության սահմանադրական հիմք:

Բացի պաշտպանության համար ներկայացված դրույթներից, հեղինակը եկել է հետևյալ եզրակացությունների.

1. Վարչական իրավունքում չի քննարկվում վարչական միջանկյալ ակտը, որպես առանձին ինստիտուտ: Այն ընկալվում է որպես իրավական ակտի տեսակ և չի կարող ընկալվել որպես վարչական վարույթը եզրափակող ակտ, ինչը նշանակում

է, որ վարչական վարույթում միջանկյալ ակտի ընդունումը բխում է վարչական վարույթում ծագող ընթացակարգային խնդիրները լուծելու լիազորությունների բովանդակությունից:

2. Վարչական իրավունքում չի քննարկվում վարչական օժանդակ ակտը՝ որպես առանձին ինստիտուտ: Օժանդակ իրավական ակտը՝ որպես անհատական իրավական ակտի ուրույն տեսակ, չի կարող կենսագործվել առանց հիմնական վարչական ակտի: Դրա տեսագործնական նշանակությունը բխում է վարչական ակտն ամբողջական դարձնելու, լրացնելու, փոփոխելու (և) կամ ընդհանրացնելու բովանդակությունից՝ բարձրացնելով վարչական ակտի արդյունավետությունը:

3. Հետագա վարչական վերահսկողության և դրա միջոցով վարչական ակտի արդյունավետության գնահատման հիմնական գործիքը բողոքարկման վարույթն է: Ատենախոսության արդյունքների ամփոփմամբ հանգում ենք բողոքարկման վարույթի այն սահմանմանը, ըստ որի՝ բողոքարկման վարույթը վարչական ակտի իրավաչափության գնահատման գործընթաց է, որի ընթացքում վարչական վերահսկողության օբյեկտ է հանդիսանում հենց վարչական ակտը: Միաժամանակ դրա ազդեցությունը տարածվում է այն հարթությունների վրա, որտեղ բացառվում է բողոքարկման մեկ այլ վարույթի իրականացումը, կասեցվում է վարչական ակտի կատարումը, կրկնակի ուսումնասիրվում են վարչական ակտը և դրա հիմքում ընկած նյութերը, ինչպես նաև փորձ է արվում վերականգնել հնարավոր խախտված իրավունքները:

4. Ընդհանրացնելով ոլորտի փորձը և տեսական դատողությունները, ինչպես նաև ատենախոսության բովանդակությամբ քննարկման առարկա դարձած վարչական ակտի գործողության կասեցման լայն և նեղ իմաստներով ընկալման մոտեցումները՝ հիմնավորվում է, որ վարչական ակտի կասեցումը դա վարչաիրավական ակտի իրավական կարգավիճակ է, որի ընթացքում հասցեատերը զրկվում է սահմանված իրավունքներն իրացնելու հնարավորությունից կամ պարտականություն կատարելուց, իսկ վարչական մարմինն այն ի կատար ածելուց:

5. Գնահատելով վարչական ակտի գոյության մասին դրա հասցեատիրոջն իրազեկելու վերաբերյալ տեսական և գործնական դատողությունները՝ կարելի է եզրահանգել, որ եթե վարչական մարմինը կատարում է բոլոր հնարավոր գործողություններն անձին կայացված վարչական ակտի գոյության մասին իրազեկելու համար, որպիսի պայմաններում անձն առնվազն օբյեկտիվ հնարավորություն է ունեցել իրազեկվել վարչական ակտի օբյեկտիվ իրականության մեջ գոյության մասին, ապա այդ իրավիճակում վարչական մարմնի գործողություններն իրազեկելու մասով պետք է դիտվեն որպես պատշաճ ծանուցում:

6. Ատենախոսության բովանդակության քննարկման արդյունքում հիմնավորվում է, որ վարչական ակտի առ ոչինչությունը վարչական մարմնի կողմից ընդունվող վարչական ակտի իրավական տրամաբանությանը, բարոյականության չափանիշներին հակասելու իրավական հետևանքն է:

Ատենախոսությամբ հիմնավորվում է նաև, որ առ ոչինչությունը՝ որպես կառավարչական լծակներով օժտված հատուկ սուբյեկտի կողմից ընդունված ակտի իրավական կարգավիճակ, կարող է դրսևորվել միայն որոշակի հիմքերի առկայության դեպքում, որոնց շարքը պետք է լինի հստակ: Այս հիմքերի շարքում իր ուրույն տեղը պետք է ունենան հետևյալ հիմքերը 1. պահանջում է անօրինական գործողության կատարում, որը հանգեցնում է հանցագործության կամ զանցանքի, 2. որով սահմանված ծավալն իրական պատճառներով ոչ ոք չի կարող կատարել, 3. որը վիրավորում է բարոյականությունը:

7. Վարչական ակտի հիմնավորված լինելը նախատեսվում է որպես վարչական ակտի նյութական իրավաչափության առանցքային տարրերից մեկը, սակայն բարենպաստ վարչական ակտ ընդունելու պայմաններում այն չունի հիմնարար իրավունքի կարգավիճակ: Այդօրինակ դատողության հիմքում ընկած է այն տեսակետը, ըստ որի՝ անձի համար կարևոր է ակնկալվող արդյունքին հասնելը բարենպաստ վարչական ակտի ձևով, այլ ոչ թե այդ արդյունքին հասնելու ուղիները: Նման պայմաններում բարենպաստ վարչական ակտերի ընդունման պարագայում (որը որևէ այլ անձի համար չունեն միջամտող ազդեցություն) վարչական ակտի հիմնավորումը պետք է դիտել որպես վարչական մարմինների համար հայեցողական լիազորություն:

8. Քննարկելով դիմումի կամ բողոքի հիման վրա վարչական վարույթի հարուցման արդյունքում անձին լսելու ինստիտուտի վերաբերյալ միջազգային և ներպետական փորձը՝ ատենախոսությամբ հիմանավորվել է այն դատողությունը, ըստ որի՝ այն դեպքում, երբ վարչական վարույթը հարուցվել է անձի դիմումի հիման վրա, ապա վերջինիս ևս մեկ անգամ լսելը, նախքան նրա նկատմամբ միջամտող վարչական ակտ կայացնելը չունի պարտադիր բնույթ: Անձը, ներկայացնելով դիմում և իրացնելով իր տնօրինչականության իրավունքը, կամայական կերպով որոշում է իր դիմումը ներկայացնելու միջոցը՝ դիմումում խնդրի վերաբերյալ դիրքորոշում շարադրելով: Նման պայմաններում վերջինս ի սկզբանե իրացնում է իր լսված լինելու իրավունքը, հետևապես, եթե գործի քննության ընթացքում չկա նոր փաստեր ներկայացնելու իրավական անհրաժեշտություն, ապա վերջինիս լսելու համար լսումներ հրավիրելը կրում է ձևական բնույթ:

9. Ատենախոսական թեմայի ամփոփման լույսի ներքո, բացահայտելով վարչական ակտի արդյունավետության գնահատման հիմնական ուղիները հետագա վարչական վերահսկողության հարթությունում՝ ատենախոսությամբ հիմնավորվել է, որ հետագա վարչական վերահսկողության եղանակների միջև հավասարության սահմանումն ունի առավել դրական ազդեցություն այս ինստիտուտի արդյունավետության բարձրացման գործում, քանի որ հավասարությունը երաշխավորում է անձի իր իրավունքների պաշտպանության եղանակն ընտրելու իրավունքը և ողջամիտ ժամկետներում գործի եզրափակման հայեցակարգի գերակայությունը՝ դրա համար օգտագործելով առավել նվազ միջոցներ և ջանքեր:

10. Վեր հանելով անբողոքարկելիության ինստիտուտի իրավական գնահատման վերաբերյալ գործնական և տեսական դատողությունները՝ ատենախոսությամբ հիմնավորվում է, որ անբողոքարկելիությունը՝ որպես հարկադիր կատարումն ապահովող և անձի բողոքարկման իրավունքը սահմանափակող իրավական լծակ, ունի առանցքային դերակատարում վարչական ակտի արդյունավետության գնահատման գործում, քանի որ վարչական ակտի արդյունավետությունն ուղղակի փոխկապակցված է այն դատողության հետ, թե որքանով է վարչական ակտը կատարված, թե որքանով է վարչական ակտը հասել դրա ընդունման նպատակին: Նման պայմաններում այդօրինակ սահմանափակմամբ ինստիտուտի վերաբերյալ կանոնակարգումների հստակ ստեղծումն ունի խիստ արդիականություն:

11. Հիմնվելով թե՛ միջազգային և թե՛ ներպետական փորձում տեղ գտած տեսակետների վրա և դրանք համադրելով ատենախոսության քննարկման արդյունքների հետ կապված վարչական վերահսկողության՝ կառավարչական ակտի գործողությունը ժամանակավորապես սառեցնող գործառույթի հետ, ատենախոսությամբ հիմնավորվում է, որ վարչական վերահսկողության՝ կառավարչական ակտի գործողությունը ժամանակավորապես սառեցնող գործառույթը չպետք է ունենա ուղղակի գործողություն, և այդ հարցի քննարկումն անհրաժեշտ է թողնել պետահիրավական լծակներով օժտված սուբյեկտի հայեցողական լիազորությունների իրացման տիրույթում: Մեր գնահատմամբ՝ ուղղակի գործողությամբ այս գործառույթի իմպերատիվ պահանջի նկատմամբ սույն ինստիտուտն ունի առավելություններ՝ պայմանավորված մարդու իրավունքների գերակայության երաշխավորմամբ: Ասվածի տրամաբանությունը բխում է այն դատողությունից, որ թե՛ կառավարչական ակտի գործողության սառեցումը, և թե՛ չկասեցնելը կարող են հղի լինել օբյեկտիվ իրականության մեջ իրական վտանգներով և հնարավոր բացասական հետևանքներով: Այն դեպքում, երբ իմպերատիվ պահանջի ուժով սառեցվում է ակտի գործողությունը, ապա հնարավոր է ինքնին առաջ քաշվեն անդառնալի հետևանքներ, որոնք ուղղակի կապի մեջ են իմպերատիվ նորմի ուղղակի կենսագործման հետ, սակայն այստեղ բացակայում է սառեցման հիմքով պատճառված վնասը հասցնողը, քանի որ սառեցումը տեղի է ունենում նորմի ուղղակի կենսագործման ուժով: Դրանով երաշխավորվում է վարչական հետագա վերահսկողության արդյունքում ակնկալվող նպատակի անարգել իրագործումը:

12. Վարչական կարգով հետագա վարչական վերահսկողությունը հադիսանում է այս ինստիտուտի առավել հաճախ կիրառվող մեխանիզմ, սակայն պետահիշխանական լիազորություններով օժտված անձանց այս իրավասությունն առավել սահմանափակ է, քան դատական իշխանության մարմիններինն է: Այդ երկու միմյանց հետ սերտ փոխկապակցված ինստիտուտների առանցքային գործիքը, որով պետք է իրականացվի վերահսկողության օբյեկտի իրավաչափության ստուգումը, դա գործի ի պաշտոնե քննության օրենսդրական պարտավորեցումն է: Վարչական բողոքն ի պաշտոնե քննելու ինստիտուտն ունի

առանցքային դերակատարում այս ինստիտուտի լավարկման գործում: Ինստիտուտի սահմանումը կլուծի անձի իրավունքների երաշխավորման առանցքային հարցը: Նման պայմաններում մարմինը բողոքը քննելիս կկաշկանդվի ոչ միայն անձի իրավունքներով, այլ նաև անկախ հանրային շահից վարչական ակտի անվավերությանն ուղղված ցանկացած փաստ բացահայտելու պարտականությամբ՝ հաշվի չառնելով դրա մասին բողոքում վկայակոչված չլինելը:

13. Ամփոփելով դոկտրինալ և գործառնական փորձը՝ ատենախոսությամբ հիմնավորվում է, որ նորմի ուղղակի կենսագործմամբ կառավարչական անհատական ակտը կարող է կորցնել իրավաբանական ուժը՝ 1. երբ գործ ունենք ժամկետային վարչական ակտի հետ, որի գործողության ժամկետը լրացել է, 2. երբ գործ ունենք վարչական ակտի հետ, որով սահմանվել է որոշակի գործողության կատարման իրավունք, և այդ գործողությունը կատարվել ու ավարտվել է, 3. երբ գործ ունենք մի վարչական ակտի հետ, որը հանդիսանում է մեկ այլ իրավական ակտի պատկանելիք մասը և չի կարող առանձին կենսագործվել առանց նախորդի գոյության, և «մայր» ակտը կորցրել է իրավաբանական ուժը, 4. երբ գործ ունենք պայմանով վարչական ակտի հետ, որում նախատեսված է իրավաբանական ուժը կորցնելու հետևանք որոշակի անգործության դրևորման դեպքում, 5. երբ ընդունվել է օրենք համաներում կիրառելու մասին, 6. երբ գործ ունենք մի վարչական ակտի հետ, որի հասցեատերը մահացել է, և օրենքը բացառում է այդ վարչական ակտով սահմանված իրավունքի կամ պարտականության հարցում իրավահաջորդությունը, 7. երբ գործ ունենք մի վարչական ակտի հետ, որի հասցեատերը հանդիսացող իրավաբանական անձը լուծարվել է, և օրենքը բացառում է այդ վարչական ակտով սահմանված իրավունքի կամ պարտականության հարցում իրավահաջորդությունը:

Եզրահանգումների իրավական և տեսական հիմնավորումներն ամբողջական տեսքով շարադրված են ատենախոսության բուն տեքստում վերլուծական տեսքով, իսկ ատենախոսության թեմայի ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշտ է արձանագրել, որ աշխատանքով անդրադարձ է կատարվել ոչ թե ոլորտում առկա բոլոր խնդիրներին, այլ միայն առանցքային և արդիականության առավել բարձր մակարդակ ունեցող խնդիրներին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Զ.Գ.Սմբատյան-Վարչական ակտի արդյունավետության գնահատման տեսական և գործնական վերլուծություն, մենագրության գլխավոր խմբագիր՝ ԻԳԴ, պրոֆեսոր Ա. Խաչատրյան, հրատարակության երաշխավորվել է ՀԵՀ գիտական խորհրդի կողմից, «Լիմուշ» ՍՊԸ-ի տպարան Երևան 2023թ., 167 էջ:
2. Զ.Գ.Սմբատյան-Վարչական իրավախախտման, վարչական պատասխանատվության և վարչական պատժի ինստիտուտների հարաբերակցության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, մենագրության գլխավոր խմբագիր՝ ԻԳԴ, պրոֆեսոր Ա. Խաչատրյան, հրատարակության երաշխավորվել է ՀԵՀ իրավագիտության ամբիոնի կողմից, «Լիմուշ» ՍՊԸ-ի տպարան Երևան 2024թ., 78 էջ:
3. Զ.Գ.Սմբատյան-Անձի լսված լինելու իրավունքը խախտելը որպես վարչական ակտի անվավերության հիմք (վարչական իրավախախտումների համատեքստում) ԵՀ գիտական հոդվածների ժողովածու, թիվ 11 (2) Երևան 2020թ., 267-278 էջեր:
4. Զ.Գ.Սմբատյան-Գրավոր վարչական ակտի մասին հասցեատիրոջն իրազեկելու և իրազեկման պատշաճության շուրջ ծավալվող հիմնահարցերը ԵՀ գիտական հոդվածների ժողովածու, թիվ 11 (2) Երևան 2020թ. 332-342 էջեր:
5. Զ.Գ.Սմբատյան-Փաստաբանների և վարչական մարմինների միջև ծագող իրավահարաբերությունների հիմնախնդիրները «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համատեքստում, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 124 Երևան 2021թ., 55-59 էջեր:
6. Զ.Գ.Սմբատյան-Վարչական իրավախախտումների ուղղակի և անուղղակի դրսևորումները «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 125 Երևան 2021թ., 47-51 էջեր:
7. Զ.Գ.Սմբատյան-Վարչական ակտի հիմնավորվածությունը որպես վարչական ակտի նյութական իրավաչափության տարր, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 128 Երևան 2022թ., 28-33 էջեր:
8. Զ.Գ.Սմբատյան-Վարչական մարմնի կողմից վարչական ակտի կրկնակի ուսումնասիրումը որպես վարչական բողոքի քննության տարր, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 129 Երևան 2022թ., 54-58 էջեր:
9. Զ.Գ.Սմբատյան-Վարչական ակտի հասկացության սահմանման տեսական-իրավական հիմնահարցերը ներպետական և միջազգային իրավական կարգավորումների համատեքստում, «Բանբեր» Եվրասիա միջազգային համալսարան, թիվ 2023-(1) Երևան 2023թ., 58-71 էջեր:

10. Զ.Գ.Սմբատյան-Վարչական ակտի օրինականությունը պատշաճ վարչարարության ինստիտուտի համատեքստում, «Բանբեր» Եվրասիա միջազգային համալսարան, թիվ 2023-(2) Երևան 2023թ., 21-33 էջեր:

11. Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ.Խաչատրյան, Զ.Գ.Սմբատյան-Վարչական իրավախախտումը որպես հակաիրավական վարքագծի դրսևորման արդյունք և դրա ընկալման հիմնախնդիրները, ՀՀ սահմանադրական դատարան «Տեղեկագիր» թիվ 1(113)2024, Երևան 2024թ. 19-38 էջեր:

ЗАВЕН ГАГИКОВИЧ СМБАТЯН

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТИ АДМИНИСТРАТИВНОГО АКТА: АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02- Публичное право. Защита состоится 20-го июня 2024 года в 16:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. О. Эмина 123).

РЕЗЮМЕ

Современные вызовы управления стали императивом для усовершенствования (оптимизации) ресурсов и улучшения предоставления услуг. В этом контексте исследование об эффективности административных актов имеет существенное значение и предполагает платформу для принятия решений на основе доказательств, повышает подотчетность управленческих органов, стимулирует организационную работу и способствует достижению всеобщих целей устойчивого и эффективного управления. В этом плане Республика Армения не является исключением.

Исследование оценки эффективности административных актов дают представления относительно совершенствования деятельности публичной власти. Выявляя передовой опыт, разработчики политики могут осуществлять целенаправленные вмешательства для повышения эффективности административного акта. В связи с указанными целями цели и проблемы, поставленные диссертацией, имеют крайне актуальную и неотложную важность.

Многочисленные административные органы, действующие как в Республике Армения, так и в других странах, ежегодно принимают миллионы административных актов.

Именно на этом уровне административные акты являются наиболее распространенным типом правовых актов, принимаемых во всем мире.

Административные акты представляют собой проявление эмпирической воли, выраженной административными органами, в рамках правоотношений публичного характера, которое казуализирует абстрактные правоотношения, затрагивая естественную жизнь, деятельность и правовые статусы лиц.

Институт административного акта, по своей сущности, занимает особое место в системе правовых актов в связи с тем обстоятельством, что административный акт является тем непосредственным инструментом, с помощью которого органы, наделенные государственно-правовыми рычагами, оказывают влияние на естественную жизнь человека, в виде установления, изменения, прекращения или утверждения прав (правового статуса) и (или) обязанностей.

Данная диссертация представляет собой системное и пространственное исследование роли, значения, целей административного акта и имеющихся в сфере регламентаций, посредством которого более подробно и полно исследуется функционирование общего института административных актов, его ветвей и смежных институтов в нашей жизни, обобщая как внутригосударственную практику, так и международный опыт.

В результате исследования поднимаются имеющиеся в этих областях теоретические и практические проблемы, одновременно предлагаются реальные пути решения выдвинутых проблем.

Данное диссертационное исследование можно отнести к концепции развития права в результате системных исследований указанных проблем, что и определяет его актуальность.

ZAVEN GAGIK SMBATYAN

LEGAL PROBLEMS OF EVALUATING THE EFFECTIVENESS OF AN ADMINISTRATIVE ACT: ADMINISTRATIVE AND LEGAL RESEARCH

Competition for the degree od Candidate of Juridical sciences in the speciality of 12.00.02 – Public law. The defence of the dissertation is scheduled for 20th June 2024, at 16:00 in a panel session of the Professional council 063 of jurisprudence of Russian-Armenian University of the RA Higher Education and Science Committee (123, H. Emin, Yerevan 0051).

SUMMERY

In this context, research on the effectiveness of administrative acts is of great importance and provides a platform for evidence-based decision-making, increases the accountability of government bodies, stimulates organizational work and contributes to the achievement of common goals of sustainable and effective management. The Republic of Armenia is no exception in this regard.

The study of evaluating the effectiveness of administrative acts allows us to get an idea of improving the functioning of state power. By identifying best practices, policy makers can take targeted measures to improve the effectiveness of administrative acts. In accordance with these goals, the goals and objectives set in the dissertation are of very urgent and urgent importance.

Numerous administrative bodies operating in the Republic of Armenia, as well as in other countries, annually adopt millions of administrative acts.

It is in this plane that administrative acts are the most common type of legal acts adopted worldwide.

Administrative acts are a manifestation of the empirical will expressed by administrative bodies within the framework of legal relations of a public nature, which casualize legal relations of an abstract nature that affect the normal life, activities and legal status of persons.

The institution of an administrative act inherently occupies a special place in the system of legal acts, including due to the fact that an administrative act is a direct instrument through which bodies endowed with state-legal levers influence the normal life of a person by determining, changing, terminating or approving rights (legal status) and / or responsibilities.

This dissertation is a systematic and spatial study of the role, meaning, goals of an administrative act and the rules existing in this area, with the help of which the functioning of the general institute of administrative acts, its branches and related institutions in our lives is studied in the most detail and fully, summarizing both national practice and international experience.

This dissertation The study can be attributed to the concept of the development of law as a result of systematic research of these problems, which determines its relevance:

The dissertation was prepared at the European University of Armenia, where scientific articles were presented and discussions on the topic were organized.

In the context of the practical applicability of the main provisions of the dissertation, discussions were also organized with representatives of various administrative bodies.

The author's comments on the institutions that make up the content of the dissertation were also presented in cassation appeals filed with the Court of Cassation of the Republic of Armenia, on the basis of some of which precedent decisions were made.

The results of the dissertation are also summarized in the appendix to the dissertation in the form of a draft law.